

չկրնար իր կամքովը մէկուն հետ պատերազմբանալ կամ հաշտութիւն ընել : Գերմանական դաշնակցութիւնը ընդհանուր ժողովով որոշած է 1822 ին, որ ամէն տէրութիւն իր բնակչաց շատութեանը համեմատ՝ 100ին 1 զինուոր տայ՝ պատերազմի ատեն . իսկ խաղաղութեամանակ 200ին 1 . և ասոնց ամէնուն գլխաւոր մէկ սպարապետ մը որոշողը ընդհանուր ժողովը պիտի ըլլայ : Խաղաղութեան ատեն լուստրիային տուած զօրքն է 94,800 հոգի, լորուսիայինը 79,234. մէկալներն ալ իրենց մեծութեանը համեմատ . բոլորը մէկէն 303,484 հոգի :

Գերմանական դաշնակցութեամիջ խիստ առաջ գնացած են արհեստները . գրեթէ քաղաք չկայ որ մէկ երկու երեւելի գործարաններ չունենայ : Ա աճաւականութիւնն ալ շատ ծաղկած է, բայց այլև այլ տէրութիններուն իրարմէ տարբեր օրէնքներ ու տուրքեր ունենալուն համար՝ գժուարութք կըքանի : Բոլոր դաշնակցութեան մայրաքաղաքն է Ֆրանքֆորթ Ո'այն գետին վրայ, վասն զի հօն կըլլայ ընդհանուր ժողովը, և օտար տէրութիւց գեսապաններն ալ հոն կընստին . իսկ երկրին բոլոր բնակիչներն են գրեթէ 35,000,000 : Գերմանական դաշնակցութեան 39 տէրութիւններուն 35 հատը միապետական կըսեպուին . իսկ չորսը հասարակապետութիւն, յու լուպեք, Ֆրանքֆորթ, Պրեմա և Համարուրկ : Ո'ենք հոս Համապուրկին պատերազմ դնելով՝ աս քաղքիս վրայ քիչ մը աւելի տեղեկութիւնք :

Համարուրկ քաղաքը լուսա գետին վրայ շինած է, ու Գերմանիայի էն վաճառաշահ քաղաքն է . 1813ին ու 1814ին պատերազմներուն պատճառաւը բնակիչները հազիւ 60,000 հոգի մնացեր էին . իսկ հիմա նորէն շատցած են, ու 122,000էն աւելի կըհամրուին . Վաղքին հին կտորին փողոցները նեղ ու աղտոտ են, տներն

ալ անկանոն ու գոթացի ձեւով շինուած ըլլալուն համար՝ խիստ ագեղ կերենան . բայց նոր կտորը շատ գեղեցիկ ու զարդարուն է՝ լայն փողոցներով ու զուարձալի զբոսարաններով : Եկեղեցիներուն մէջ ամէնէն գեղեցիկն է սուրբ Ո'հքայէլ, որ խիստ բարձր զանգակատուն ունի, տակն ալ ընդարձակ գետնափոր տեղուանք : Ոուրբ կիողայոս եկեղեցւոյն մէջ երգեհօն մը կայ որ կըրոպայի էն մեծ երգեհօններուն մէկն է : Ը ատերեւելի շէնք էնակ հասարակաց հիւանդանոցը, բանտը, գրքատունը և ուրիշ տեղուանք . ուսումնական շէնքերուն մէջ ալ անուանի է նաւուղղութեան դպրոցը, ու աստղաբաշխական դիտարանը : Կազմաթիւ գործարաններն երեւելինները շաքար զտելու գործարաններն են, և ոմանք կըպատմեն զարմանալով թէ միայն Համապուրկ քաղաքին մէջ տասը միլիոն լիալրէ շաքար ու խահիկ կերթայ ամէն տարի : Ծս քաղաքը թէպէտ զօրաւոր թումբերով պաշտպանուած է լուսա գետին դէմ, բայց երբեմն մեծամեծ վնասներ կըքաչէ աս գետէն, ու շատ տներ կըքանդուին : Եւ սակայն անցեալ տարի մայիսի ծին պատահած մեծ կրակին վնասները չափէ գուրս եղան . վասն զի գրեթէ երկու օր երկու գիշեր՝ այրեցաւ քաղաքը . 1500 տնէն աւելի մոխիր դարձաւ, 720էն աւելի ալ քանդուեցաւ . ասոնց հետ նակ եկեղեցիներ ու երեւելի շէնքեր . բոլոր կրակին վնասը 200 միլիոն ֆուանքէն աւելի կըհանեն :

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԺՈՒ ԷՆՉԱՐ ՊԵՏՐՈՎ Է ԱՆԴՐԵԼ ԺԱՄԱՆԱԿ :

Կըդասն ԴԱՏԻՆ ՔՈՐ ԺԱՄԱՆԱԿԸ ՀՈՒՄ Կանցնի, կըսէ Ո'ենեկա, բայց չենք գիտեր թէ ինչ բանի գործածենք անք քիչ ժամանակը : Ո'եր կեանքը կան-

յընենք կամամենևին բան մը չընելով
կամ մեր պարտքին դէմ գործքեր ը-
նելով . միշտ կըխօսինք մեր օրերուն
կարծութեանը վրայ , և անանկ կապ-
րինք որ կարծես թէ կեանքերնիս
լմբնալիք չունի :

Ես դիտեցի , կըսէ , հիմակուան ի-
մաստուն մը , մարդկային մտաց հակ-
ասութիւնը աս բանիս մէջ : || ասն
զի թէպէտ ընդհանրապէս կըցաւինք
կեանքին կարծութեանը վրայ , բայց
կըփափաքինք որ շուտով անոր ամէն
մէկ մասին վերջը տեսնենք : Տղան
կուզէ շուտով մեծնալ , ետքը գործքի
մէջ մտնալ , հարստութիւն դիզել , պա-
տուոյ համանիլ . մեծը կըփափաքի որ
տարիները օրի պէս անցնին , ետքը քա-
շուի հանգչելու համար : || չանկով
թէպէտ կըձանչնանք կեանքին կարձ-
ըլլալը , բայց ամէն տարուան շրջանը
մեզի երկայն և տաղտկալի կերենայ :
|| չանոր կընմանի որ մէկը ուզէ կան-
գունին երկայնութիւնը մեծցընել ,
իսկ մէջի բաժանմունքները դար-
ձեալ 12 պահելով պղտիկցընել , որ
անկարելի է :

|| աշխառուն՝ բաղդաւոր կըսե-
պէր ինքզինքը թէ որ իրեն շահու
դրած ստակին ատենէն ինչուան շահ
առնելու ատենը մէկ վայրկեանի պէս
անցնէր : Խորագէտը իր կեանքին ի-
րեք տարին սիրով կուտար՝ թէ որ
մէկ օրուան մէջ կարենար անանկ
գործքեր ընել , ինչ որ պիտի ընէր ի-
րեք տարուան մէջ : Հիւանդը գոհ կըլ-
լար՝ թէ որ ձմեռները մէկ վայրկեա-
նի պէս անցնէին , և շուտ շուտ գա-
րունները դառնային գային : || ւստի
որչափ ալ շուտ անցնի ժամանակը ,
մենք աւելի ուրախ կըլայինք շատ
պարագաներու մէջ՝ թէ որ աւելի
շուտ շուտ անցնէր :

(Յոււան մէջ այնչափ աւելորդ ժա-
մեր ունինք որ կըձանձրանանք , և
շատ անգամ կըփափաքինք որ օրերը՝
տարիները մէկէն անցնին : || լլալիք

մեզի իբրև . մէկ հեռաւոր գաւառ մը
կերենայ , որուն երթալու համնելու
համար մէջտեղը մեծամեծ անապատ-
ներ կան , ուսկից կուզենք շուտով մը
անցնիլ որպէս զի համնինք ան տեղը
որ կըկարծենք թէ պիտի հանգչինք :

Կատ մարդու կեանքը քսան կտոր
կըթաժնուի . ասոնցմէ տասնըինը կը-
տորը պարապ ժամանակներ են , ո-
րոնց մէջ ոչ կըհանգչին և ոչ ալ գործ-
քի մը հետ կըլան : Չեմ ըսեր ան
մարդիկներուն համար որ բանի գոր-
ծի տէր են . այլ միայն պարապ կե-
ցող ու զուարծութեան ետեւէ եղող-
ներուն : Կանք ինչ պէտք է ընեն որ
ան պարապ ժամանակներուն մէջ
չձանձրանան : Խամանակ անցընելու
համար եղած գործքերուն մէջ առ-
ջինն է առաքինութեան գործքերը
նել : Ոնէ որ առնենք միայն ան առա-
քինութիւնները որ ընկերութեն մէջ
հարկաւոր կըլան , աշխոյժ մարդու
մը այնչափ աշխատելու գործք կըթա-
ցուի , որչափ որ առուտուրի զբաղած
մարդ մը կաշխատի : () յ չանցնիր որ
դիպուած մը չհանգիպի տգէտին բան
մը սորվեցընելու , աղքատին օգնելու ,
սգաւորին խորհուրդ տալու և միս-
թարելու : Խրեեմն պէտք կըլայ ար-
դարութիւն ընելով իրաւունք տալ
արժանաւոր մարդուն . նախանձունե-
րը հանդարտեցընել , բարկացողնե-
րուն կիրքը իջեցընել , անկարգները
զզջումի բերել : || չ պարտքերը ա-
նանկ ընական են որ կատարողներուն
սրաին մեծ զուարծութիւն ալ կը-
պատճառեն : Ուրիշ տեսակ առաքի-
նութիւն մըն ալ կայ որ մարդս առան-
ձին գտնուած ատենը կընայ ընել .
յն ան պարտքը որ կըստիպէ արարած-
ները իրենց արարչին հետ խօսելու :
|| արդս որչափ ատեն որ Կանուծոյ
առջելը կըկենայ , միշտ գոհ և ուրախ
սիրտ կունենայ , և նոյն ատենը միս-
թարուած կըհանգչի՝ մտածելով թէ
սիրելի բարեկամին հետ կըկենցաղի .
ժամանակը այնպիսւոյն երկայն չերե-
նար , և անկարելի է որ ինքզինքը մի-

նակ կարծէ : Ա'արդկանց ընկերութիւնը թողածին պէս՝ սիրու ուրախութեամբ կըլեցուի , եռանդը կըվառի , յօյսը կըաստկանայ , և կըձանձնայ որ Ա'ստուած զինքը միշտ կըպաշտպանէ , և բոլոր իր սրտին ցաւերը կըբանայ Ա'ստուծոյ առջե ինչպէս մէկ որդի մը իր հօրը :

Երկրորդ տեսակ գործքն է ժամանակ անցընելու համար՝ անմեղ զուարձութեանց հետ զրադիլ : Ուհապէտ և կերենայ որ վայելու բան չէ մէկ խելքով ստեղծուածի մը անանկ բաներով զուարձանալ , որոնց աղէկութիւնը շատ շատ ան է՝ որ գէշ և վնասակար չեն : Ա'արդ կըտարակուսի թէ խաղի թուղթն ալ աս տեսակ զուարձութեանց կարգը սեպէ թէ չէ . բայց քիչ մը խելքէ դուրս բան կերենայ որ խելացի մարդիկ օրը տասուերկու ժամանցընեն մէկ տրցակ՝ խաղի թուղթը խաւնելով ու խառնելով , և որոշած թիւերուն լցուիլը ովատձառ բերելով՝ իրարու ձեռքէն ստակ առնելը իրաւունք և զուարձութիւն սեպէլ , և ան պատկերներուն վրայ մտածելցաւելով կմը խնտալով :

Ա'իթէ աս տեսակ մարդիկները կենաց կարծութեանը վրայ գանգատելու իրաւունք ունին : Ուատերական խաղերն ալ աս տեսակ զուարձութեան , մանաւանդ թէ խրատի նիւթ ալ կըլլային՝ թէ որ ինչ կարգով ինչ և վախճանով հնարուած են՝ նոյն զգուշութենք կատարուեին :

Բայց մարդս ամէն բանէն աւելի կըզուարձանայ Ճշմարիտ հաւատարիմ բարեկամի մը հետ խօսելու ատեն : Ա'ռաքինի և խոհեմ բարեկամ ունենալուն նման երջանիութի չկայ աշխարհքիս մէջ : Ա'սոր ընկերութիւր միտք կըբանայ , կըմիսիթարէ , նոր խորհուրդներ միտքդ կըձգէ , առաքինութեան սէրը կըվառէ սրտիդ մէջ , բարի մտածմունքներով կըզարդարէ միտքդ , կիրքերդ կըհանդար-

տեցընէ , և աւելորդ կարծուած ժամանակները օգտակար կընէ քեզի : Ա'սանկ Ճշմարիտ բարեկամի մը հետ վարուելէն ետքը պէտք է նաև ընկերութիւն ընել անոնց հետ որ կրնան կրթել զմեզ և զուարձացընել . ասերկուքը՝ կրթութիւն ու զուարձութիւր գրեթէ միշտ մէկտեղ կըդանուին :

Ուրիշ շատ տեսակ ատեն անցընելու հարկաւոր բաներ ալ կան որ պէտք էր աւելի շատցընել՝ թէ որ կարելի ըլլար հարկաւոր եղած ատենը գործածել տալ , բան թէ պարապ կեանք անցընել և յանկարծ միտքը ընկած կիրքերուն հետեւիլ : Եկն որերաժըշտութեան սէր ունի , կարծես թէ մէկ զգայարանք մըն ալ ունի ուրիշ մարդիկներէն աւելի . անով երեեմն կըզուարձանայ , կըզբաղի : Ծաղիկ հոգալ , ծառ տնկել , պարտէզ զարդարել , ու երկրագործութեն արհեստի ետեւէ ըլլալը թէ պէտե հարուստներուն աւելորդ բան մը կերենայ , բայց ասոնք ատենը անմեղութենք անցընելու մեծ նիւթեն , և շատ հարկաւոր ու զուարձալի անոնց որ աս բաներուս ետեւէ կըլլան : Ա'ս տեսակ զուարձութիւներուն մէջ ամէնէն աղէկն է օգտակար գըրքեր կարդալ , ուսման հետ ըլլալ , և նոր գիտելիքներ միտք առնել . ասոնց մով մարդուս կեանքը կերկընայ :

ԱԶԳԱՅԻՆ ԽԵԴԻՐ

Եւծ կածէնց անդաբանութեան հայոց 1 :

Հօքսրաբութ այս և լցամիտ գումարումն վեճական կաձառոյն՝ կիրս ներհակակիրս յիս զարթուցանէ , զվարանս ասեմ և զբաջալերութիւն . վարանս , զի որ ՚ի համօրէն ժողովը հայկաղնեաց ընդ առաջինն է իմաստութեամբ , ահա զիշանի յունկնդրութիւն նուաստիս բանասացութեան . և քաջալերս , զի զորմէ բուռն հարեալս է ձառել զնորին զարդիւնն ՚ի ձեզ Ճշգրտիւ նկատեալ տեսանեմ . որպէս զի եթէ և խուն ինչ կայծակն յանօպութենէ իմաստից ընդուասուցեալ՝ ՚ի ձերդ խառնեցի խարոյկ անշիշանելի , ձեզ փառք յա-